



Մոտակա դրամական ռեֆորմի հետեւանքներից ազգաբնակչության շահերը պաշտպանելու նպատակով, «ՄԵՐԿՈՒՐԻ» ձեռնարկությունը երկու շաբաթով հայտարարում է 1961-1992 թթ. թողարկման թղթադրամների ընդունում 6 ամիս ժամկետով, որի դիմաց առաջարկում է 105%:

Փաստորեն Ձեզ հնարավորություն է ընձեռվում ոչ միայն կրկնապատկել Ձեր կարողությունը, այլեւ, փոխել Ձեր տրամադրության տակ գտնվող հին թողարկման թղթադրամները նորերով:

ENTERPRISE Mercury

Երեւան, Սայաթ Նովա 19,
«Անի» հյուրանոց, 6-րդ հարկ,
636 սենյակ հեռ. 59-46-36


Համառոտ Հատ

## Նոր նամականիշ եւ ծրարներ Պապի այցի առթիվ

Սեպտեմբերին Հռոմի պապ Հովհաննես Պողոս Բ-ի Լատվիա կատարելիք այցի առթիվ «Լատվիաս պաստս» պետական ձեռնարկությունը նախատեսում է թողարկել նոր նամականիշ եւ յոթ ծրար, հաղորդում է Լետա գործակալությունը: Պապի դիմանկարով 15 սանտիմ արժողությամբ նամականիշի էսքիզը կատարել է լատիշ հայտնի նկարիչ Միերվալդիս Պոլիսը: Նամականիշը շրջանառության մեջ կդրվի օգոստոսի 28-ին: Հռոմի պապի պատկերով նամականիշի թողարկման իրավունքի համար «Լատվիաս պաստսը» Վատիկանին վճարել է 2500 լատ (մոտավորապես 3850 ամերիկյան դոլար): Նշան

## Քսան գավաթ գարեջուր առանց վարժանքի

«Ստրակոնիցկի նեկտար» 10 աստիճանանոց գարեջրի 10 լիտր խմեց դրա սպառման 11-րդ միջազգային առաջնության հաղթողը, որն անցկացվում էր Չեխիայի Ստրակոնիցե փոքր քաղաքի «Ու Զբոռովսկու» ռեստորանում: Այդ մրցումներին կարող էր մասնակցել 18 տարին լրացած գարեջրի յուրաքանչյուր երկրպագու, սակայն ռեստորան մտնողը պետք է հաստատեր, որ ի վիճակի է միանգամից ըմպել մեկ գավաթ ոսկեգույն հեղուկ: Կարճատեւ ընդմիջումից հետո հավակնորդները վարժանք սկսեցին. եզրափակիչ հասնելու համար մասնակիցը պետք է մեկ ժամում խմեր 6 գավաթ: Եզրափակիչ հասավ 8 մարդ, այդ թվում մեկ ամերիկացի: Հաղթողը չեխ էր, որը պարգեւ ստացավ 10 հազար կրոն: Նշան

## Հաշմանդամների շուրջերկրյա ճամփորդություն

Բորիս Ելցինը ողջերթ է հղել շուրջերկրյա ճամփորդություն ձեռնարկած երեք հաշմանդամների՝ Յուրի Շատրովալովին, Եվգենի Կլիչկովին եւ Ալեքսանդր Սուխանինին, որում հույս է հայտնել, որ «դա ոչ միայն մարզական, այլեւ նշանակալից քաղաքացիական ձեռնարկում է»: Հաշմանդամները, որոնք անցնում են հաշմանդամական նստակառքերով 11 հազար կիլոմետր են անցել Սանկտ Պետերբուրգից Վլադիվոստոկ, նրանք պատրաստվում են կրկնել այդ երթուղին:

## Ափի մեջ տեղավորվող համակարգիչ

«Կոմպակ կոմպյուտեր կորպ»-ը հաղորդում է, որ ներկա տարի ներկայացնելու է փոխադրական, ձեռքի ափի մեջ տեղավորվող (հանդհելդ) համակարգիչներ: Դրանց մեջ զուգակցված են ավանդական համակարգչի հնարավորությունները մոբիլ հեռուստահաղորդակցությունների հետ եւ աշխատանքը ցանցում: «Կոմպակը» միակ ընկերությունն է, որն ԱՄՆ-ում այս տարվա առաջին եռամսյակում ավելացրել է իր բաժինը փոխադրական համակարգիչների ԱՄՆ-ի շուկայում: Նոր համակարգիչ... ված են ... թյունից օգտվելու հնարավորություն ընձեռել ինչպես սեղանի, այնպես էլ փոխադրական համակարգիչներից եւ աշխարհի այլ ծայրում գտնվող ցանցից, օգտագործելով «Մայքրոսոֆթ Վորդ» ծրագրային ապահովումը: Այն միեւնույն ժամանակ ապահովում է «Մոբիլ Քոմփանիենսի» եւ դեռ տողեր, ֆաքսիմիլային եւ պատճենահանող սարքեր: Նյու-Յորք


Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր
ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՀԱՄԼԵՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ / 581841

Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ / 562863

Apple® Macintosh®
համակարգչային շարվածք
«Ազգ» թերթի

Azg
armenian daily

Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Թերթի ձեւավորման եւ ... հեղինակ ՊԱՎԵԼ ԴԱԼԼԱՔՅԱՆ